Պատշաճ էլեկտրոնային փոստի հասցե

Ապահովադիրների, ապահովագրված անձանց և տուժողների համար ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումը և կից փաստաթղթերը ներկայացնելու համար պատշաճ էլեկտրոնային փոստի հասցե է համարվում՝ համապատասխան պատահարում ներգրավված իրեն պատկանող (իր կողմից վարած) ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագրի վկայագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ դրա բացակայության դեպքում՝ նրա կողմից վերջին անգամ որևէ ապահովագրական ընկերության հետ կնքված ԱՊՊԱ պայմանագրի վկայագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեն, բացառությամբ հետևյալ դեպքերի.

1. եթե դիմումը կամ այլ փաստաթուղթն ուղարկելու պահին դիմողին պատկանող (նրա կողմից վարված) Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ պատահարի պահին գործած ԱՊՊԱ պայմանագիրը դադարել է, և հատուցման գործընթացի շրջանակում այդ անձը ներկայացրել է հաղորդակցման այլ էլեկտրոնային փոստի հասցե, ապա պատշաճ էլեկտրոնային փոստի հասցե է համարվում այդ էլեկտրոնային փոստի հասցեն,

2. եթե դիմողին պատկանող (նրա կողմից վարված) Ավտոտրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում չհաշվառված ավտոտրանսպորտային միջոց է, կամ դրա վերաբերյալ պատահարի պահին առկա չի եղել գործող ԱՊՊԱ պայմանագիր, և համապատասխան գործընթացի շրջանակում այդ անձը ներկայացրել է հաղորդակցման այլ էլեկտրոնային փոստի հասցե, ապա պատշաճ էլեկտրոնային փոստի հասցե է համարվում այդ էլեկտրոնային փոստի հասցեն: